



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՎԱԿԵ ՀԱԿՈՒՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ
ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ սյունեցիներ,

Ավարտվում է 2017 թվականը, որը մեզ համար ամենից առաջ ձեռքբերումների տարի էր: Համատեղ ուժերով մեզ հաջողվեց կյանքի կոչել մի շարք ծրագրեր, և տարին ամփոփել արձանագրելով, որ այսօր մենք ունենք վերածնունդ ապրող Սյունիք:

Անցնող տարվա ամենակարևոր նվաճումները, թերևս, Մեղրու ազատ տնտեսական գոտու բացումն ու Կապանի օդանավակայանի վերագործարկման մեկնարկն էին, որոնք վստահաբար նոր թափ կհաղորդեն մարզում իրականացվող ներդրումներին, տնտեսության և զբոսաշրջության զարգացմանը, ինչպես նաև որակական նոր մակարդակի կբարձրացնեն հայ-իրանական հարաբերությունները: Մեզ հաջողվեց մարզում բարենպաստ պայմաններ ստեղծել գործարարության զարգացման համար, ինչի արդյունքում հիմնվեցին մի շարք ձեռնարկություններ ու ստեղծվեցին նոր աշխատատեղեր:

Մենք մուտք ենք գործում 2018 թվական՝ համոզված լինելով, որ այն լինելու է նոր հնարավորությունների, տնտեսական առաջընթացի, կարծրացած արատների դեմ հետևողական պայքարի և աննախընթաց նվաճումների տարի:

Սիրելի՛ սյունեցիներ,

Անշուշտ, Ամանորն իր հետ բերում է նոր հույսեր, նոր սպասումներ ու ծրագրեր: Յուրաքանչյուր ընտանիք ունի իր ակնկալիքները, իր հոգսերն ու նպատակները:

Ոմանք սպասում են բանակից որդու վերադարձին, ոմանք էլ նորածին մանկան բերկրանքն են ակնկալում:

Թող 2018 թվականը կյանքի կոչի բոլորիդ երազանքները: Յուրաքանչյուր երջանկացած ընտանիք ավելի ուժեղ է դարձնում մեզ և մեր երկիրը:

Բոլորիս խաղաղություն և բարօրություն:

Շնորհավո՛ր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ